



Համահայկական ցանց Like 100k

USD 479.54 | EUR 529.22 | RUR 7.77 Երևան ☀️ -7 ... +8 C

ԳՈՎԱԶՆ

Գլխավոր էջ | Լուրեր | Աշխարհում | Հայաստան և աշխարհ | **Քաղաքականություն** | ավելին... ▼

Տեսություն Լրահոս Հոդվածներ Հարցազրույցներ Օրացույց

На русском

Մի եր Հովհաննիսյան. Ղարաբաղյան հակամարտության մասին հայկական ռեսուրսները գերազանցում են ինտերնետում աղբբեջանականներին

19 հունիսի 2012 - 16:41 AMT

PanARMENIAN.Net - Ղարաբաղյան հակամարտության մասին հայկական ռեսուրսները գերազանցում են ինտերնետում աղբբեջանականների հանդեպ:

Այդ մասին Երևանում կայացած մամլո ասուլիսում հայտարարել է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտական քարտուղար, վիրտուալ հայագիտության ու տեղեկատվության բաժնի վարիչ Մի եր Հովհաննիսյանը:

Ըստ նրա, դա ապացուցելու համար կարելի է ուղղակի «ղարաբաղյան հակամարտություն» հարցում տալ տարբեր որոնողական ռեսուրսներում: «Եթե մի քանի տարի առաջ այդ ոլորտում բազմաթիվ աղբբեջանական ռեսուրսներ կային, ապա այժմ վստահաբար կարող եմ ասել, որ գերակշռում են հայկականները: Եվ ոչ միայն հայկական ինտերնետ միջավայրում, այլ ընդհանուր առմամբ ինտերնետում, մասնավորապես Վիքիփեդիայում», -ասել է նա:

Հովհաննիսյանը նշել է, որ հայկական ռեսուրսները հիմնականում դինամիկ զարգանում են, ի տարբերություն աղբբեջանական ռեսուրսների:

Նա նաև հավելել է, որ արդեն մի քանի տարի է, ինչ հայկական ռեսուրսների թվում առաջին պլան են դուրս գալիս հայկական գիտահետազոտական կենտրոնների կայքերը, մասնավորների փոխարեն, որոնք մինչ այդ տանում էին տեղեկատվական դիմակայություն Աղբբեջանի հետ: